

րանը և սարսուղեցուցիչ երեկոն կը թաղէր յաւ-
ւիտենական անմահութեան գաղափարը, զայն
յանձնելու համար պատմութեան յաւերժական
արշալոյսներուն:

Այս հոյակապ դիւցազներգին մէջ Ալէմշահ
գրած էր Յիւլիէի իսկական հոգին, իր ուղղակի
ներշնչարանն եղած է այդ ոսկեմատենը ուր
խտացած է հայուն բիւրեղացած անցեալն ու
ապագան:

Երկարաշունչ աշխատանքը կատարեալ միութե-
թիւն մ'ունէր իր ամբողջութեան մէջ. ամէն գոր-
ծիք իր ուրոյն պաշտօնը կը կատարէր ճշտուած
և դաշնաւորուած միւսներուն հետ: Հեղինակը
տիրացած է ընտանի էր իւրաքանչիւր նուագա-
րանի հետ: Խորհրդաւորութիւններն ու սաստ-
կութիւնները ազդեցիկ էին, մանաւանդ մեծ
կարեւորութիւն տրուած էր նմանաձայնին և
երաժշտական պատկերներուն:

Պէտք է ըսել որ 45 հոգինոց նուագախումբը
քիչ էր այդքան մեծ գործ մը իր կատարելու-
թեան մէջ ներկայացնելու համար:

Ճապող պիտի ըլլայ, երբ ըսեմ թէ խելայեղ
ծափերը և կեցցէները շատ երկար տեւեցին,
խանդավառ ժողովրդի կողմէն: Անոնցմէ ոմանք
գիտակցաբար, ոմանք բնազդօրէն կը զգային
թէ այս երաժշտութեամբ հայը արուեստի մեծ
նուաճում կը կատարէր և կրնար պարծիլ իր
տաղանդաւոր զաւակով:

Միջանկեալ դադարէ մը վերջ՝ որ հոգիները
կ'անդորրէր՝ կը նուագուէին Գ. Ալէմշահի հայ
ժողովրդական պարերը: Ատաղձը կոմիտաս վար-
դապետի հաւաքածոյէն էր: Երեւանի երանգին
և Շուշուայ Մարալի Ունապին և Վաղարշա-
պատի Շուշիկը:

Պահելով իրենց հայկական նկարագիրը, եր-
գերը եւրոպական նուագաւորութիւն նուրբ ա-
րուեստն ու պերճանքն ունէին: Չէին սուտած
իրենց բնիկ հարստութենէն, և ոչ ալ եւրոպա-
կանացած, ինչպէս շատ մը անխոհմ երա-
ժիշտներ ըրած են ուրիշ երգերու վրայ: Չորսն
ալ քնքուշ և զուարթ էին, տափի, սրինգի և
բարձրաւորինգի (oboe) տիրող գեղջկական պար-
զութեան մէջ: Պարերուն յաջորդեցին դաշնա-
ւորուած չորս մենեքներ նուագախումբի ըն-
կերակցութեամբ: Առաջինն էր «Բոնիստրիկը»
ստորագրողի քերթուածին վրայ, ուր կարօտի
միջաւանջը Ե. Փափազեանի հոգեխումբ ձայնով
ծուխին հետ կը բարձրանայ երգիքէն, մինչ
գործիքները կը ձայնակցին մեղմ ու տիրանոյշ

հովերուն, որոնք կը բերեն հայրենի ծուխն ու
կարօտը:

«Ծըխէ՛, ծըխէ՛ իմ բուխերիկ հայրենի
կարօտանքիս այրումով
Ես հեռու եմ բայց ծուխդ հոգւոյս կը հասնի
իմ սարերուս հովերով»:

Օր. Իրիս Պիւլպիւլեան մեղ հմայեց Ա. Ի.
սահակեանի «Ծաղիկ էի» և Թէքէեանի «Ես
սիրեցի»-ով, մանաւանդ այս վերջինը յուզումի
և գործիացումի իսկապէս գեղեցկութիւն մ'էր,
երբ նուագախումբի կամաւոր dissonance-ը մըտ-
քերը կը պատրաստէր թախծոտ երգի մը խոր
և զգայուն ներածութեամբ:

Նոյնը կարելի է ըսել և Ա. Իսահակեանի
«Սիրելիս»-ին համար, զոր Պ. Մարիկեան շատ
լաւ երգեց իր թաւային ձայնով: Ալէմշահի
«Երկու պատմութիւն»-ը հազար ու մի կ'իշխէր
միջին հեղինակին համար նոր աստիճան
մ'էր վերելքի, առաջին ունենդորութիւնն էր.
շատ տպաւորիչ ու հէքեթային, նիւթը ա-
րեւելեան էր, մանաւանդ արաբական ներշնչու-
մով. ուր դարձեալ քաղցրաւար գործիքները կը
խօսէին ոսկեղէն սոխակի պէս, հետաքրքր
հա-
շիշի և խունկերու թեւերուն մէջ. ամբողջ
շուայտ և շուայլ: Արաբիան հարազատօրէն կը
պատկերանար մեր երեւակայութեան:

Նուագահանդէսին յայտագիրը կը վերջանար
Ա. Սպենդիարեանի երեւանեան երիւնկերու
շարքէն «Ինչիկի» և «Հիմազ»-ով թէպէտ նուազ
յաջող քան մեր մեծ վարպետին «Երեք արմա-
ւենիները», սակայն այս երկուքն ալ մեր սրտին
մօտ էին և շատ եղական մոխրակերտ և գոր-
ծիացումի աշխատանքով. մանաւանդ «Հիմա-
զը» մեծ ոգեւորութիւն ստեղծեց բռնի կըր-
կնութեանց մղելով նուագողները:

Երբ հանգէսը կը վերջանար ամբողջ դէմքե-
րուն վրայ կար գոհունակութիւն. ամէն մարդ
կը զգար գեղեցիկ օրուան մը տպաւորութիւնը,
ուր արուեստ, ազգ և պատիւ կազմած էին ցան-
կալի եղբայրութիւն մը:

Որչափ փափաքելի էր որ Գ. Ալէմշահ յա-
ճախ տար այսպիսի նուագահանգէսներ, ոչ
միայն հայութիւնը այլեւ օտարները մասնակից
ընելու մեր տոհմիկ հարստութեան, փոխանակ
կուսակցական կռիւներու և կամ կարեկցու-
թիւն մուրալու մեր դատին համար: Մենք կը
մաղթենք համակրելի և տաղանդաւոր երգահա-
նին լաւագոյն յաջողութիւններ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ ՈՒ ՀԱՆԴԵՍՆԵՐ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ս. ԽԱԶԻ ՏՕՆԸ. — Վեհեօիկ — Մ. Ռաֆ. Վրժբն.

Ո՛վ որ Մայիս 3ին Վենետիկ գտնուի, պիտի
տեսնէ Դուքսերու քաղաքաբն ճնաշխարհիկ
տաճարին քով ամբոխ մը որ կը գիմէ մօտա-
կայ Հայոց րաղը (Calle degli Armeni) և հոն
Հայոց Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ (Santa Croce
degli Armeni) ներկայ կ'ըլլայ հայկական սի-
րուն ձայնաւոր պատարագին, որուն պսակը
կ'ըլլայ երեկոյեան ժամերգութիւնը՝ խունկով,
շարականով ու կենաց փայտին համբոյրով օծուն:

Սրբազան արարողութիւն մը կրկին դարերով
շարունակուած Ուխտիս Հայրերէն վանքին աշա-
կերտութեան հետ, մասնակցութեամբ Մ. Ռա-
փայէլեան Վարժարանի սաներուն:

Յիշատակի տարեկան նուիրականութիւնը սա-
կայն անբաժան է այժմ տխուր մտածութենէ
մը: Ո՛չ որ, ոչ մէկ հայ կայ կամ հայախօս
սերունդ անոնցմէ՝ որ երբեմն հոս կ'ապրէին բարի
համբաւով և բարեկեցիկ դիւրքով:

Այս տարի սակայն կրօնաբոյր հանգէս մը
խառնուեցաւ եկեղեցականին՝ Մ. Ռաֆ. Վար-
ժարանին մէջ, սակաւաթիւ հայ գաղութին,
և Վենետիկ եկեղեցական ու քաղաքական մեծ
դէմքերուն ներկայութեամբ:

Յարգանքի, սիրոյ և երկրպագութեան ցոյց
մ'էր կենաց փայտին, և այդ աստուածային յի-
շատակը այնքան մեծ էր և խոր՝ որքան թարմ
և համաշխարհական ցոյցը Գողգոթայի Զոհի1900
ամեակին, որուն հետ կը խառնուէր բնականօրէն
մեր նահատակ ցեղին եւ մեր ցեղովին նահատա-
կութեան Ապրիլեան նուիրական յիշատակը:

Ճառերու, ոտանաւորներու, հայ և օտար եր-
գերուն մէջէն բացառիկ շքով գուրս ցայտե-
ցին հայ-եկեղեցական երկու անմահ մեղեդիներ,
«Արժարսիլոնքեալը» զոր տխուր վեհութեամբ
երգեց ուխտիս երաժշտագէտ և գեղաձայն Հ.
Վեհեօ Վ. Տայեան, և «Երկու խաչաւորացեալը»
նոյն Հօր ձեռքով ուսուցանուած և խաղա-
գրուած, զոր նուագեց վենետիկեան ջութակե-
րու քառակը. երգ մը որ իր ընթացքին կը
ճախրէ ազնիւէն՝ վսեմ, ու կ'իջնէ խոր Լքումի
և յուզման մէջ, անցնելով թալկացումի պա-

հերէ. երգ մը՝ համակ խտացում արեւելեան
խանդի, թէեւ միշտ զուսպ իր գծերով՝ որոնք
սրբաբոյր ստեղծներու սահմանէն չեն զարտու-
ղիր բնաւ:

Երգասէր և գեղագէտ վենետիկցի ընտրանին
իր զմայլանքն յայտնեց և վառ տենչը՝ ստէպ
այդ գեղեցիկ երգերէն նմոյշներ վայելելու:

ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ. — Մ. Ռաֆ. Վրժբն. Վեհեօիկ.

Այս տարի Մայիս 27ին կատարուեցաւ Միւի-
թար Աբրահամ, Մուրատի և Ռափայէլի տա-
րեկան հանգէսը, ոգեւորութեամբ մը, սիրով և
պաշտամունքով՝ որոնց արժանի են այդ մեծերը:

Յետ առաւօտեան հանգիստաւոր պատարագին՝
որ կը մատուցուէր Մուրատի և Ռափայէլի հո-
գիներուն համար, խառնուած դաստիարակնե-
րուն և աշակերտութեան բարեպաշտ արձագե-
ներուն, ճաշէն վերջ ժամը 3, 30ին տեղի կ'ու-
նենար գրական-երաժշտական ակումբը:

Քաղաքիս Արժի Պատրիարքին, եկեղեցական
ու քաղաքական բարձրաստիճան հրաւիրեալ-
ներուն եւս ծանօթացնելու համար ազնիւ բա-
րեւարները, վարժարանին հսկիչներէն Պ. Ռից-
ցոյ մանրամասնօրէն պարզեց անոնց կեանքը,
ազնիւ նպատակն ու անոր համար սահմանած դա-
մուրը, շուրջ հարիւրամեայ ընթացքին այդ հաս-
տատութեան տուած արդիւնքները հայ ազգին:

Աշակերտներէն՝ Թ. Կապուտիկեան, Յ. Չէր-
քեղեան՝ արձակ, իսկ Պ. Գաֆթանձեան ալ
ոտանաւորով մը՝ գեղեցիկ դրուագներ հիւսցնին
բարեբարներուն անուան և մեծ գործին: Ու-
կեան - Չաքարեան պատանին ոտանաւորով մը
ցոյց տուաւ բեմական տաղանդի ցուբեր ար-
տայայտութեան և շարժութեան ուժեղ թափով:

Ուրախալի էր տեսնել երաժշտական խումբը
Վարժարանին ջութակաշար սաներէն - Յ. Պո-
յաճեան, Վ. Կիրակոսեան, Գ. Գալֆայեան,
Մ. Պախչէճեան, և որպէս ցայտուն և արուես-
տին տիրացած Խ. Քէշիշեան, որոնք մեր ժո-
ղովրդական երգերէն զատ ճաշակ մը տուին
Պէթձովէնէն և Շուպերէն և այլ նուագներէ:

Հուսկ հնչեցին խմբերգով քայլերգը Մի-
թար Աբբազօր՝ որուն անդերին շուրջը ստակ
կազմելով՝ հանգիստաւոր ցոյցը կը կատարէին
սիրոյ և երախտագիտութեան, լուսանորոգի մեծ
հոգւոյն և օրինակին համեմատ զարգանալով,
որպէսզի նոյն հոգւով նուիրուին մեր ազգին բա-
րոյական և մտաւորական յառաջադիմութեան:

Միաբանութեան ընդհ. Աբբազայրը Հ. Յ.
Աւգեր, քաջալերեց և ուրախակից եղաւ սանե-
րուն ցոյց տուած խորին զգացումներուն Մի-
թարի և զոյգ Բարերարներուն հանդէպ ու հայ-
րական յորդորով սրտապնդեց զանոնք զար-
գանալ կրթութեան այդ սրբավայրին մէջ:

ՄԱՐԶԱՀԱՆԳԻՄ

Բարերարներու նուիրուած գրական-երաժշ-
տական ակումբին յաջորդեց մարզահանդէսը՝
որ ինչպէս մեզի նոյնքան նաեւ հրապուրիչ է
վէճեակոյ կրթական բարձր շրջանակներուն:

Ուս. Կալլոյի հրամատարութեան տակ մեր
կորովի հայ պատանիները ցոյց տուին մեր ա-
մուր և չարքաշ տիպարը՝ նախ շոշոտակաւ
մարզանքով, յետոյ ձեւնագրողով, վազքով,
ցատկերով զանազան ձեւերով, ձողի և չուանի
վրայ վերելքով եւն:

Ընդհանուր խաղերուն մէջ փայլեցան՝ Ն. Յա-
կոբեան որ փոխանորդն էր ուսուցչին ընդհ.
հրամատարութեան մէջ, ինչպէս խմբապետները՝
Յ. Երկանեան, Ա. Յակոբեան, Հ. Ասլանեան, Մ.
Շերինեան, Ս. Գաղեղեան և Ժ. Եղիազարեան:

Որպէս մրցանիշ կոտորողներ նախորդ տարի-
ներուն վրայ՝ հաճոյքով կը յիշենք Նուպար
Յակոբեանը՝ որ յաջողեցաւ ցատկէլ՝ երկայնու-
րիւն 6-20 մետր. բարձրութիւն՝ 1,60 մ. (ա-
մերիկեան ոճով). բարձր. պատուանդանով՝
180 մ. - բարձր. ձողով՝ 3 մ.:

Իսկ Յ. Երկանեան՝ երկայնութիւն (ցատկի)
6,10 մ., զերարձակութիւն (5,50 հզրգրմ. ծանր)
13 մետր (աննախընթաց յաջողութիւն): Հուսկ
նշանակելի է նաեւ Մ. Խաչատուրեան՝ որպէս
ձկնաձէւ ձի ցատկով:

Ժամ մը տեւեց մարզահանդէսը բազմութեան
հետաքրքրուող խանգովառութեան մէջ

Մեր կորովի սաներուն կը յայտնենք մեր լիա-
սիրտ խնդակցութիւնը, նորանոր յաղթանակ-
ներով քաջանալու մտաւորականին հետ մար-
մնակրթանքի կարեւոր հրահանգներուն մէջ:

ԽՄԲ.

ԲԱՐԵՐԱՐԱՅ ՅԻՇԱՏԱԿԸ. — Ի ՍԵՐ (Փարիզ):

Միթար Աբբազօր, Մուրաթի և Ռաֆայէլի
յիշատակին սարքուած հանդէսը, մայիս 6-ին,
երախտագիտութեան և յարգանքի խանգովառ-
ցոյց մ'եղաւ ներկայ և նախկին սաներու մաս-
նակցութեամբ՝ ի ներկայութեան Փարիզի մեր
ազգայիններուն հոծ բազմութեան:

Մուրաթեան վարժարանին տեսուչը՝ Հ. Սա-
հակ վ. Տէր Մովսէսեան արժանի գրուածքն
ըրաւ աղնիւ Բարերարներուն և Միթարի՝ որ
գիտցաւ իր Ուսումնի ձեռքով անմահացնել ազ-
գօգուտ նուիրական հաստատութիւնը, ուսկից
այնքան լոյս և սէր ծծեցին և սփռեցին ամբողջ
Ազգին մէջ Պէշեքթաշեան և իր ետեւէն հա-
րիւրաւոր և հազարաւոր աղնիւ սրտեր ամբար-
տակ կանգնելով հայ ցեղին պաշտպանութեան:

Խօսք առաւ ապա Պ. Ա. Ինձիճեան որպէս
Թարգման Մ. Ռաֆ. Ն. Աշակերտաց Միթա-
թեան վառ զգացումներուն, շէշտեց օտարա-
ցումի վտանգը, մատնանշեց մեծ բարերարնե-
րուն օրինակը՝ որոնց հարկ է հետեւին ուրիշ-
ներ ալ՝ յանուն մեր ազգութեան, ի լոյս հա-
նելու նորանոր նման հաստատութիւններ:

Իրմէ վերջ Պ. Հրանդ Համաձեւեան՝ պաշտող
մը Պէշեքթաշեանի գաղափարին՝ ոգեւորուած
խօսքերով կոչ ըրաւ հայ սրտերուն՝ շղթայ կազ-
մելու եղբայրութեամբ՝ հայ ազգութեան նուիր-
ական դրօշին տակ:

Միթարի և զոյգ Բարերարներուն նուիրուած
գեղեցիկ ուղերձներ և արտասանութիւններ կա-
տարեցին սաներէն ոմանք:

Իսկ հանգէսին գեղարուեստական բաժինը
փայլեցուցին հեշտաւոր մեներգներով՝ Օր. Հ.
Անադամեան և Ե. Փափազեան:

Հանգէսը իր ամբողջութեամբ կարծես համազ-
գային բնոյթ ունէր, ինչպէս ամէն հանգէս որ
կը կատարուի Միթարեան յարկերուն տակ.
և այդ աղնիւ և մեծ ոգին է որ կը կերպաձեւէ
աշակերտութիւնը՝ ազգանուէր տարրեր ըլլա-
լու վաղը բոլոր հայաշատ կեդրոններուն մէջ,
միշտ հայ ազգին բարձրացման գաղտնի համար:

Մեր անվերապահ խնդակցութիւնը Մուրա-
թեան վարժարանին յարգելի Տեսչութեան՝ որ
գիտէ այսպէս կրթել աշակերտութիւնը և սփո-
փել մեր հայրենաբաղձ սրտերը նման գեղեցիկ
և կրթիչ հանգէսներով:

ՏԵՂԵԿԱԿՈՒ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ՕՉԱՆ ԿԱՐՕ. — Խրճիթներէն միւլէի խոր-
հրդարանը. արձակ էջեր և քերթումներ. (Ն.
Գ. Բ. մատենաշար 8). էջ 156. Փարիզ, 1933.
Գինը՝ 20 ֆր.:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ. — Այսպէս է Ամե-
րիկան. էջ 46. Ֆիլատելֆիա, 1934:

ԳԵՂԱՐԳՈՒՆԻ Գ. — Լուսերի քաղաքէն, վէպ,
հր. Հ. — Սամուէլ գրատան, էջ 127, Փարիզ,
1933: — Թօշկեղէն վերջ, վէպ. հր. Հ. — Սա-
մուէլ գրատան. էջ 149, Փարիզ, 1934:

ՃԼՊԵՃԵԱՆ ՏՈՐԹ. Ա. Յ. — Ժառանգակա-
նութեան նորավէպը. էջ 302. տպ. Գուլէճ, Հա-
լէպ, 1934:

ԲԱՍԵԻԿԵԱՆ Ս. Ա. — Արարիկի և շրջա-
կայի գիւղերը. պատմական ազգագրական հա-
մառում տեսութիւն. էջ 159, Պէյրուս, 1934:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ (Խմբ.) — Մատիս տարե-
գիրք, Ա. տարի, 1934. էջ 320. հր. և տպ.
«Մատիս» տպարանի, Սոֆիա:

ԶԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀԱՆ. — Յիշատակարան,
Գ. հատ. Թ. 22-26: — 22-23, Թրքահայ լրա-
գրութիւնը. — 24, Նշանաւոր ազգայինք. — 25-
26, Հայ գաղութը և մամուլը Եգիպտոսի մէջ:

Գրութեան խաչի Օր, բացառիկ թիւ, նուիր-
ուած Միթարեան հնգամեայ գործունէութեան
1929-1934. հր. Պուլկ. Գ. Թ. Խաչի շրջ. վար-
չութեան:

Տեղեկագիր, 1931-1933 Արաղի շրջանի ազ-
գային գաղութների. Թէհրան:

ՓԱՆՉԻԿԵԱՆ Հ. ԳԵՈՐԳ. — Ծաղրուած ու-
տիկանակերտը, քրքշալիք գաւեշտ երկու արար-
ուածով. (Շար. Թատր. Թ. 7), էջ 30. Պուլկի,
տպ. «Իզմիրլեան», 1934: — Երկու տարու ծա-
ռակեր, գաւեշտ մէկ արարուածով (Շար. Թատր.
Թ. 8), էջ 32. Պուլկի, տպ. «Լուսնա», 1934:

Հ. Բ. Յ. (Թրգմ.) — Վարք Ս. Թերեզա Յի-
տուսի. էջ 64. տպ. Պուլկի, 1933: — Վարք
Ս. Մարգարիտա Մարիամ Աղակրի. էջ 66.
Պուլկի, 1933: — Աղորքներ Յիտուսի Սրտին.
էջ 16. Պուլկի, 1934:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ (ամփոփեց). — Պատանեկու-
րեան փորձրիկներէն. էջ 101. Պուլկի, 1933:
— Ինչպէս ծնողը սեռային դատարարու-
րիւն պիտի տայ իր գաւիկին. էջ 68. Պուլկի,
1934:

ԶԱՐԳԱՐԵԱՆ ՀՐԱՉ. — Մեր կեանքը. վէպ.
էջ 304, Տպ. «Արաքս» Թափաւեան Եղբ. Փարիզ:

ՊԵՏՐՈՍԵԱՆ Ղ. Տ. (պատրաստեց). — Որ-
րիւն գիրքը. յիշատակներ մերձաւոր Արեւելքի

Նպաստ. Ընկ. գործունէութենէն Սիւրիա-Լիբա-
նան և Պաղեստինի շրջան 1915-1930. էջ 120.
Գինը՝ 8 ֆր. Տպ. «Ազատ», Պէյրուս, 1932:

ԱՄՍՈՒՆԻ ԵՐՈՒՍԵՒ Վ. — Ինչ տեսայ
Խ. Հայաստանի մէջ. էջ 56. Տպ. Ֆիլատել-
ֆիա, 1933:

Յ. Պ. ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ (կազմեց). — Ղե-
ւոնդ Արք. Գուրեան, իր կեանքն ու գործը.
(կենսագրութիւն՝ Ա. Ալպոյաճեանէն). էջ 160.
Գինը՝ 10 եգ. դհ. Տպ. Սահակ-Մեսրոպ, Գա-
հիրէ, 1934:

ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ Պ. — Մանկան
դատարարականը տան մէջ. էջ 80. Գինը՝
5 եգ. դհ. Տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1934:

ՏԱՏՐԵԱՆ ՎԱՀՐԱՄ. — Վերջին ներկայա-
ցումը. տրամ 3 արար և 1 պատկեր. էջ 44.
Գինը՝ 50 դր. Տպ. «Կիւթեմպերկ», Կ. Ն. Մա-
գասեան, Կ. Պուլկ, 1933:

ՌԱԶՄՈՒՆԻ Ա. — Ազգային կեանք. Թատե-
րախաղ գաղթահայ կեանքէ, 3 արար. էջ 96.
Գինը՝ 10 ֆր. Տպ. «Արաքս» Թափաւեան Եղբ.
Փարիզ, 1933:

ՄԱԳԻՍՏՐՈՍ Յ. Ե. — Փռնիչ ձիւն դիպարա-
նութեան (ոտանաւոր) հանդերձ ծանօթութիւն-
ներով. էջ 43. Գինը՝ 4 ֆր. Տպ. Կ. Տօնիկեան,
Պէյրուս, 1933:

Յատուկ շնորհակալութեամբ ստացած ենք
նկատեալ Հայ եկեղեցական երաժշտական
գործերը

Աստուածային Պատարագամատոյց կամ
Խորհրդատետր Սրբազան պատարագի ըստ
արարողութեան Հայաստանեայց Առաք.
Ս. Եկեղեցւոյ. — գրաւ. աշխ. եւ անգղ.
հանդերձ Մ. Եկեղեցւոյ ձայնագիր երգեցողու-
թիւններով և անոնց անգղ. տառերով, հայերէն
ընթերցանութիւններով: — Շարադարագրեց, աշ-
խարհաբարի վերածեց և անգլիկերէնի թարգմ.

Արեւն քնն. Թորոսեան
2 հտ. Տպ. Նիւ Եորք, 1933:

ՏԵՏԵՍԵԱՆ ԵՂԻԱ Մ. — Տարերք երաժշ-
տութեան. էջ 44, Գինը՝ 50 դր.:

— Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Ե-
կեղեցւոյ և յաւելուած բովանդակութիւն ըստ
ուր ձայնից. Բ. տպ. Տպ. Յ. Ասատուրեան Որ-
դիւ. էջ 146+10. Գինը՝ 75 դր. Կ. Պուլկ, 1933: